Հավելված N 246
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26 -ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) Եվրամիության հետ տնտեսական համագործակցության վարչության (այսուհետ՝ Վարչություն) Եվրամիության հետ համագործակցության բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (ծածկագիր՝ 23-32.10-Մ4-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Պաշտոնի փոխարինման պաշտոնները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում, նրան փոխարինում է Բաժնի մյուս ավագ մասնագետը:

1.4 Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1) մասնակցում է Եվրոպական Միության հետ առևտրատնտեսական համագործակցության ուղղությամբ աշխատանքների իրականացմանը,

2) մասնակցում է ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» առևտրի և առևտրին առնչվող մասով դրույթների իրականացմանը,

3) մասնակցում է ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» առևտրի և առևտրին առնչվող մասի կիրարկման ճանապարհային քարտեզի իրականացման և դիտանցման հետ կապված աշխատանքներին,

4) մասնակցում է ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» ներքո գործող Առևտրի հարցերով կոմիտեի և համապատասխան ենթակոմիտեների նիստերի կազմակերպման, անցկացման, նիստերի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման աշխատանքներին,

5) մասնակցում է Եվրամիության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող աջակցության շրջանակներում ֆինանսավորման համաձայնագրերի շուրջ բանակցությունների համակարգման, համաձայնագրերի կնքման և

վավերացման/հաստատման ընթացակարգերի և համաձայնագրերի շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի մշտադիտարկման ու գնահատման աշխատանքներին,

6) մասնակցում է Եվրոպական Միության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի» (GSP+) դիտանցման գործընթացներին առնչվող աշխատանքներին և երկրի զեկույցի պատրաստմանը,

7) մասնակցում է ԵՄ կողմից տրամադրվող «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմի շրջանակներում «Գրանցված արտահանողների համակարգի» կիրառմանն ուղղված աշխատանքերին,

8) մասնակցում է ԵՄ Արևելյան Գործընկերության «Տնտեսական զարգացման և շուկայի հնարավորություններ» պլատֆորմի համակարգման աշխատանքներին,

9) մասնակցում է ԵՄ Արևելյան Գործընկերության «Տնտեսական զարգացում և շուկայի հնարավորություններ» 2-րդ պլատֆորմի ներքո գործող Կառուցվածքային բարեփոխումների, ֆինանսական հատվածի, գյուղատնտեսության և ՓՄՁ-ների, Առևտրի, Թվային շուկաների ներդաշնակեցման պանելների աշխատանքներին,

10) մասնակցում է ԵՄ Արևելյան Գործընկերության «Կապ, էներգաարդյունավետություն, շրջակա միջավայր և կլիմայի փոփոխություն» 3-րդ պլատֆորմի ներքո գործող Էներգետիկայի, Տրանսպորտի, Շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության պանելների աշխատանքներին,

11) մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակության գրասենյակի հետ իրականացվող համագործակցությունից բխող աշխատանքներին,

12) մասնակցում է Եվրոպական Միությունում Հայաստանի Հանրապետության առևտրական կցորդի հետ համագործակցությունից բխող աշխատանքներին,

13) մասնակցում է ԵԱՏՄ շրջանակներում իրականացվող՝ առևտրային բնույթի օրենսդրական և նորմատիվաիրավական ակտերի, ներառյալ՝ ազատ առևտրի համաձայնագրերի մշակման և կարգավորմանն ուղղված գործունեության մշտադիրտարկմանը/փորձաքննությանը՝ այն ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ի դրույթների հետ համադրման և երկկողմ ձեռք բերված պարտավորությունների հարգելու և ապահովման նպատակով,

14) մասնակցում է ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի» (GSP+) ներքո «Գրանցված արտահանողների համակարգ»-ում (REX) գրանցման նպատակով արտահանողներին անհրաժեշտ խորհրդատվության տրամադրման, համապատասխան փաստաթղթերի և հայտերի ուսումնասիրության աշխատանքներին,

15) մասնակցում է ԵԱՏՄ-ում ընթացող ապրանքների և ծառայությունների միասնական շուկայի ստեղծման գործընթացի մշտադիտարկմանը՝ ապահովելու այդ գործընթացի՝ ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ դրությունների և ՀԳԸՀ կիրարկման ճանապարհային քարտեզների հետ համապատասխանելիությունը,

16) մասնակցում է Եվրոպական Միության, Եվրասիական տնտեսական միության, Անկախ պետությունների համագործակցության, Առևտրի համաշխարհային կազմակերպության և միջազգային կազմակերպությունների շրջանակներում գործունեության, ինչպես նաև դրանց շրջանակներում ծրագրերի իրականացման դիտանցմանը, վերլուծությանը և համապատասխան առաջարկությունների ներկայացմանը,

17) մասնակցում է ԵՄ Հարևանության ներդրումային պլատֆորմի (NIP), Հարևանության ներդրումային հիմնադրամի (NIF), Եվրոպական ներդրումային բանկի (EIB), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD), Գերմանական զարգացման բանկի (KfW), ինչպես նաև եվրոպական այլ ֆինանսական և բանկային կազմակերպությունների հետ համագործակցության իրականացմանը,

18) մասնակցում է ԵՄ աջակցության ծրագրերի շրջանակներում Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Ասիական զարգացման բանկի, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և այլ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերին:

Իրավունքները՝

- Եվրոպական Միության հետ առևտրատնտեսական համագործակցության և ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» առևտրի և առևտրին առնչվող մասով դրույթների իրականացման նպատակով համապատասխան մարմիններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, տեղեկատվական փաթեթներ, հաշվետվություններ,
- Եվրամիության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող աջակցության շրջանակներում ֆինանսավորման համաձայնագրերի իրականացման նպատակով համապատասխան մարմիններից պահանջել հաշվետվություններ, եզրակացություններ, առաջարկություններ և զեկույցներ,
- Եվրամիության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի» (GSP+) դիտանցման գործընթացների շրջանակներում պահանջել տեղեկատվական փաթեթներ, ոլորտային զեկույցներ և այլ փաստաթղթեր,
- ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի» (GSP+) ներքո «Գրանցված արտահանողների համակարգի» կիրառմանն ուղղված աշխատանքներն իրականացնելու նպատակով պահանջել գրանցման հայտեր, անհրաժեշտ տեղեկանքներ, լիազորագրեր,
- ԵՄ Արևելյան Գործընկերության «Տնտեսական զարգացման և շուկայի հնարավորություններ» պլատֆորմի աշխատանքների համակարգման շրջանակներում ստանալ գրություններ, ծրագրեր, առաջարկություններ, հաշվետվություններ,

• ԵՄ Արևելյան Գործընկերության «Տնտեսական զարգացում և շուկայի հնարավորություններ» 2-րդ պլատֆորմի ներքո գործող Կառուցվածքային բարեփոխումների, ֆինանսական հատվածի, գյուղատնտեսության և ՓՄՁ-ների, Առևտրի, Թվային շուկաների ներդաշնակեցման պանելների աշխատանքների շրջանակներում ստանալ գրություններ, ծրագրեր, առաջարկություններ, հաշվետվություններ,

• ԵՄ Արևելյան Գործընկերության «Կապ, էներգաարդյունավետություն, շրջակա միջավայր և կլիմայի փոփոխություն» 3-րդ պլատֆորմի ներքո գործող Էներգետիկայի, Տրանսպորտի, Շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության պանելների աշխատանքների համար ստանալ նկատառումներ, առաջարկություններ, ծրագրեր,

• Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակության գրասենյակի հետ իրականացվող համագործակցությունից բխող աշխատանքների շրջանակներում ստանալ հաշվետվություններ, զեկույցներ, գրություններ, տեղեկատվական փաթեթներ,

• Եվրոպական Միությունում Հայաստանի Հանրապետության առևտրական կցորդի հետ համագործակցությունից բխող աշխատանքների շրջանակներում պահանջել հաշվետվություններ, զեկույցներ, գրություններ, տեղեկատվական փաթեթներ, ծրագրեր,

• ԵԱՏՄ շրջանակներում իրականացվող՝ առևտրային բնույթի օրենսդրական և նորմատիվաիրավական ակտերի և ԵԱՏՄ-ում ընթացող ապրանքների և ծառայությունների միասնական շուկայի ստեղծման գործընթացի մշտադիտարկման ապահովման նպատակով համապատասխան մարմիններից ստանալ տեղեկատվություն, առաջարկություններ, եզրակացություններ,

• ԵՄ Հարևանության ներդրումային պլատֆորմի (NIP), Հարևանության ներդրումային հիմնադրամի (NIF), Եվրոպական ներդրումային բանկի (EIB), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD), Գերմանական զարգացման բանկի (KfW), ինչպես նաև եվրոպական այլ ֆինանսական և բանկային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում ստանալ տեղեկատվություն, հաշվետվություններ, զեկույցներ, առաջարկություններ,

• ԵՄ աջակցության ծրագրերի շրջանակներում Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Ասիական զարգացման բանկի, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և այլ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերի շրջանակներում ստանալ տեղեկատվություն, հաշվետվություններ, զեկույցներ, առաջարկություններ:

Պարտականությունները՝

• Եվրոպական Միության հետ առևտրատնտեսական համագործակցության և ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» առևտրի և

առևտրին առնչվող մասով դրույթների իրականացման նպատակով պատրաստել գրություններ, զեկուցագրեր, տեղեկանքներ, մշակել իրավական ակտերի նախագծեր և տրամադրել հաշվետվություններ,

• Եվրամիության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող աջակցության շրջանակներում ֆինանսավորման համաձայնագրերի իրականացման նպատակով մշակել իրավական ակտերի նախագծեր, տեղեկատվական, դիտանցման փաթեթներ, տրամադրել հաշվետվություններ, առաջարկություններ և զեկույցներ,

• Եվրամիության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի» (GSP+) դիտանցման գործընթացների շրջանակներում մշակել և տրամադրել տեղեկատվական փաթեթներ և երկրի զեկույց,

• ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի» (GSP+) ներքո «Գրանցված արտահանողների համակարգի» կիրառմանն ուղղված աշխատանքներն իրականացնելու նպատակով ուսումնասիրել գրանցման հայտեր, տեղեկանքներ, տրամադրել արտահանողների գրանցումն հաստատող փաստաթղթեր,

• ԵՄ Արևելյան Գործընկերության «Տնտեսական զարգացման և շուկայի հնարավորություններ» պլատֆորմի աշխատանքների համակարգման շրջանակներում մշակել ծրագրեր, առաջարկություններ, տրամադրել հաշվետվություններ,

• ԵՄ Արևելյան Գործընկերության «Տնտեսական զարգացում և շուկայի հնարավորություններ» 2-րդ պլատֆորմի ներքո գործող Կառուցվածքային բարեփոխումների, ֆինանսական հատվածի, գյուղատնտեսության և ՓՄՁ-ների, Առևտրի, Թվային շուկաների ներդաշնակեցման պանելների աշխատանքների շրջանակներում մշակել ծրագրեր, առաջարկություններ, տրամադրել հաշվետվություններ,

• ԵՄ Արևելյան Գործընկերության «Կապ, էներգաարդյունավետություն, շրջակա միջավայր և կլիմայի փոփոխություն» 3-րդ պլատֆորմի ներքո գործող Էներգետիկայի, Տրանսպորտի, Շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության պանելների աշխատանքների շրջանակներում մշակել ծրագրեր, առաջարկություններ, տրամադրել հաշվետվություններ,

• Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակության գրասենյակի հետ իրականացվող համագործակցությունից բխող աշխատանքների շրջանակներում տրամադրել հաշվետվություններ, զեկույցներ, գրություններ, մշակել տեղեկատվական փաթեթներ,

• Եվրոպական Միությունում Հայաստանի Հանրապետության առևտրական կցորդի հետ համագործակցությունից բխող աշխատանքների շրջանակներում տրամադրել հաշվետվություններ, զեկույցներ, գրություններ, տեղեկատվական փաթեթներ, ծրագրեր,

• ԵԱՏՄ շրջանակներում իրականացվող՝ առևտրային բնույթի օրենսդրական և նորմատիվաիրավական ակտերի և ԵԱՏՄ-ում ընթացող ապրանքների և ծառայությունների միասնական շուկայի ստեղծման գործընթացի մշտադիտարկման ապահովման նպատակով մշակել տեղեկատվական փաթեթներ, տրամադրել առաջարկություններ, եզրակացություններ,

• ԵՄ Հարևանության ներդրումային պլատֆորմի (NIP), Հարևանության ներդրումային հիմնադրամի (NIF), Եվրոպական ներդրումային բանկի (EIB), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD), Գերմանական զարգացման բանկի (KfW), ինչպես նաև եվրոպական այլ ֆինանսական և բանկային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում տրամադրել տեղեկատվություն, հաշվետվություններ, զեկույցներ, առաջարկություններ,

• ԵՄ աջակցության ծրագրերի շրջանակներում Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Ասիական զարգացման բանկի, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և այլ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերի շրջանակներում տրամադրել տեղեկատվություն, հաշվետվություններ, զեկույցներ, առաջարկություններ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ միջազգային կապերի (միջազգային հարաբերությունների) բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ

1. Բանակցությունների վարում
2. Ժամանակի կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում
4. Ժողովների, խորհրդակցությունների և հանդիպումների կազմակերպում:

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը
Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները
Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը
Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը
Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը
Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: